

Սարգիս արեղայ ի մէջ ալ յիշատակարաններու կը գրէ էջ 261ա «Զմեղապարտ եւ զիցուն գրիչ Սարգիս . յիշեայ եւ զեղբայրս իմ (հոգեւոր) զԴաւիթ Հաղբատեցի, եւ զԹորոս ծաղկող՝ Տարօնեցի» : Զեռագիրը գրուած «ի թվ. ՉԿԷ (1318) ի գաւառիս Վայոց ձորոյ, յանապատս Գլածոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, եւ մեծ վարդապետի եւ անյա (ի)թ հռետորի՝ Եսայեայ : Ի թագաւորութեան Հայոց Աւչնի, եւ ի կաթողիկոսութեան (քերուած է սակայն պէտք է ըլլայ Կոստանդին Կեսարացին) եւ յիշխանութեան գաւառիս Ամիր Հասանայ, որդոյ Իաչէ, որդոյ Ամիր Հասանայ, որդւոյ Պոօշայ բարեպաշտի» : (Յուցակ էջ 857-858) :

Այս ձեռագրին զարգարաններուն եւ մանրանկարներուն մասին կը գրէ Հ. Սարգիսեան : «ԶԱՐԴԱԳԻՐԻՔ սակաւ են, կարմրագոյն :—ԽՈՐԱՆՔ չկան :—ԿԻՍԱԽՈՐԱՆՔ 3, ԹՂ. 1ա, 183ա, 187 (մեծ եւ զեղեցկադրուաք :—ԼՈՒՄԱԶԱՐԴԻՔ 3 հաս միայն :—ՆԿԱՐԻ ԹՂ. 181բ. (Տիրամայրն՝ Յիսուս մանուկն ի գրկին), ԹՂ. 182ա. (Գրիգորէս եւ իր ամուսինը Մամախաթուն, ծնրագիր եւ դարձած դէպի հանդիպակաց՝ Տիրամայրն կ'աղօթեն ձեռնբաց : Երկուքն եւս քառագունեան են եւ զեղեցիկ, իբրեւ ճարտար եւ ճշգրիտ տիպար միջին դարու հայկական տարազուց՝ յոյժ հետաքրքրական են :)» (Անդ էջ 847) : Հ. Ալիշան դունատիպ հրատարակած է Թորոս Տարօնեցիի այս երկու մանրանկարներն ալ : Գրիգորիսի եւ Մամախաթունի մանրանկարները թէեւ անգոյն սակայն Հ. Ալիշանի հրատարակածէն աւելի հարազատ հրատարակուած է Հ. Հացունիէ իր չլուիս գործոց Պատմ. Հին Հայ Տարագի (1924) հատորին մէջ (էջ 221) :

Այս մանրանկարներուն հեղինակութեան համար Հ. Ալիշան ունեցած է կասկած ինչու որ Աստուածամօր նկարին տակ կարմրատառ գրուած է «դանպիտան Յոհանէս յիշել աղաչեմ» : (Միսական էջ 133) : Հ. Սարգիսեան ալ բոլորովին զուրկ չէ եղած կասկածանքէ, որ ակնարկելով Յոհանէսի վերոյիշեալ յիշատակութեան «որ հաւանօրէն կամ նկարիչն ըլլալու է եւ կամ Դրդ յիշատակարանին մէջ յիշուած Յոհանէսն» : (Յուցակ էջ 859) : Ես անտարակոյս Թորոս Տարօնեցին կը նկատեմ մանրանկարիչն ալ, եւ յիշեալ Յոհանէսը պարզապէս ստացող մըն էր :